
ՔՍԱՆ ՏԱՐԻ ՄԻՈՎԱՐԴԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Մոնտանարո Կ., Սպոլադորե Ռ., Սալերնո Ա., Մարանտա Ֆ., Տորլասկո Կ., Գարդինի Կ., Մարգոնատո Ա., Ֆրագաստ Գ.

Սան Ռաֆայել գիտական ինստիտուտի կլինիկական սրտաբանության բաժանմունք և սրտային անբավարարության բաժին, Միլան, Իտալիա

Ձախ փորոքի հետադարձ և ոչ հետադարձ դիսֆունկցիայի հայտնաբերումը քրոնիկ սրտամկանի դիսֆունկցիայով հիվանդների մոտ ունի կարևոր կլինիկական նշանակություն: Ներկայումս ակտիվ քննարկման առարկա է չլծկվող, բայց կենսունակ միոկարդի պայմաններում միոկարդիալ ռեվասկուլյարիզացիայի օգտակարությունը: Այս հոդվածում միոկարդի պոստենցիալ կենսունակության խնդիրները քննարկվում են երկու հեռանկարային տեսակետներից.

- 1) մեթոդների քննարկումը, որոնք զարգացել են և կիրառվում են սրտամկանի հետադարձ դիսֆունկցիան հայտնաբերելու համար.*
- 2) սրտամկանի դիսֆունկցիայի դեպքում պսակաձև զարկերակների ռեվասկուլյարիզացիայի գնահատումը՝ ռիսկ/առավելություն հարաբերության տեսակետից:*

Իրականում կենսունակ միոկարդի պսակաձև զարկերակների ռեվասկուլյարիզացիան պետք է միշտ համարվի պարտադիր, իսկ ոչ կենսունակ միոկարդի ռեվասկուլյարիզացիան դեռևս հանդիսանում է քննարկման խնդիր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ դեպքում կասկածելի է միոկարդի ֆունկցիայի բարելավումը և հետագա կանխատեսումը:

Ներկա հոդվածում քննարկվելու են սրտամկանային ռեգիդուալ կենսունակության հայտնաբերմանն ուղղված կարևոր մեթոդները, իրենց հարաբերական առավելությունները և սահմանափակումները, ինչպես նաև կլինիկական կիրառումը: